սպահոց. և բազումք հալածեցան և գէշք նոցին ընդ նսեմանալ երեկոյին կառաբարձք տարեալ ընկեցան ի ծով, և յայնմհետէ ուղիղ ոչ կարէին հայել յերեսս միմեանց, ուր որ հանդիպէինն:

(ՌՂԸ = 1649)

Փետրվար ամսոյ ԺԴ, յաւուր տօնի սրբոյ գալըստեան Քրիստոսի քառասնօրեայ ի Տաճարն ձեռնադրեաց Երուսաղէմի նուիրակ Խաչատուր վարդապետն Դ քահանայս՝ զՏէր Վարդան, զՏէր Իգնատիոս, զՏէր Յովանէս փոքր՝ ի Սուրբ Աստուածածին եկեղեցի, և բազում դպիրս՝ ի Զ եկեղեցեաց ձեռնադրեաց, որ էր Կիրակոս վարդապետէն[1]) մինչեւ ցայժմ ոչ թողէին դպրի փոխ եւ քարոզ ասել յեկեղեցի կամ շապիք զգենուլ եւ դպրութիւն առնել, յորոց միջի կայի եւ չնչինս, եւ եկեալ ի Սուրբ Սարգիս եկեղեցի մեր:

Մարտի ամսոյ Լ վէզիր պիղծն նոր խմն հարկ եդեալ ի վերայ հարկատուաց, վասն զի տօնանմայի նաւուցն պատերազմի որ երթային ի Ֆռանկս որ Ե ամէ ՌՂԴ էառ կղզին Կրետեայ[2]). սա արկ թի անուամբ, որպէս զի արս գոցեն գրամով, ԵՃ այր Հրէից, ԲՃԾ Յունաց, ԲՃԾ ի Հայոց. և ԲՌ ըստակ ի գլուխ միոյն եառուն ի պէկլիկէն և զայլ ճար արարեալ եգին հարկ ի մէջ իւրեանց բամք երից ազանց ի վերայ ամենեցուն և ժողովեալ եառուն և գնացողք անբան տաճիկք և ռամիկք յայլոց նահանգաց առնէին զստակն եւ մտանէին ի նաւս: Նաև ի վերայ արհեստաւո-

1) վրպտն. 2) Կրիտեա.